ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

«ԼԵՆՈՒՂՈՒ ՋԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

,,10 ,,հունվար 2025 թ.
Թիվ 2

Արմավիրի մարզպետ
**Ա.Մեխակյանին**

Հարգարժան մարզպետ ,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է պատմության ուսուցչի (15 դասաժամ) թափուր տեղ :

Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթը կկայանա 2025թ-ի հունվարի 29-ին՝ ժամը 15:00-ին:

Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարության տեքստն ամբողջությամբ:

Առդիր՝ 1 թերթ:

Տնօրեն՝ Լ.Պողոսյան

Կ.Տ

**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության (15 դասաժամ) թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ-ի հունվարի 10-ից հունվարի 23**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. հունվարի 29-ին՝ ժամը 15:00-ին**, Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ,գյուղ Լենուղի,7-րդ փ.,շենք 38: Տեղեկությունների համար զանգահարել 093-18-60-76 հեռախոսահամարով: